ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Տեղ, 0284-96-2-20, tegh101@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԱՊՐԻԼԻ 2025ԹՎԱԿԱՆԻ N 071-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015թ. մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման դրույթներով և հիմք ընդունելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2025 թվականի ապրիլի 03-ի դիմումը, ***որոշում եմ՝***

1.ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ բնակավայրի 8-րդ փողոցի, թիվ 1 հասցեում Սերյոժա Դավթյանին պատկանող տարածքի 0,22կՎ էլեկտրամատակարարման աշխատանքների կատարման համար տալ շինարարության թույլտվություն:

1.1.Շինարարական աշխատանքներն իրականացնել 1 տարվա ընթացքում:

1.2.Կառուցապատողը շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Տեղ համայնքի ղեկավարին ներկայացնել N2-5 ձևի տեղեկանք:

2. Աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՂՈՒԼՈՒՆՑ**

2025թ. ապրիլի 07
գ.Տեղ